ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բ. Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների հետ միասին նաև հայ ժողովրդի վերածննդի նախապայմանը հանդիսացավ։ Սովետական կարգերի հաղթանակից հետո պատմական կարճ ժամանակաշրջանում երկրում ստեղծվեց բազմաճյուղ հզոր արդյունաբերություն, ցարական Ռուսաստանի ագրարային կցորդից Հայաստանը դարձավ արդյունաբերական զարգացած հանրապետություն։

Ժողովրդական տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ինտենսիվությունը բնորոշող և պայմանավորող մեծությունների թվում իրենց շատ կարևոր տեղն ունեն կապիտալ ներդրումները, դրանց աճի տեմպերը, ինչպես նաև օգտագործման արդյունավետությունը։ Կապիտալ ներդրումների տարեկան ծավալը մեր հանրապետությունում աճել է բարձր տեմպերով։ Եթե սովետական իշխանության առաջին տարիներին՝ 1921—1928 թթ., երբ վերականգնվում և զարգացման նոր հունի մեջ էր դրվում առաջին համաշխարհային պատերազմի և ապա դաշնակցության տիրապետության շրջանում հիմնովին քայքայված ժողովրդական տնտեսությունը, կապիտալ ներդրումների ծավալը կազմեց ընդամենը 8 միլիոն ռուբլի, ապա դրան հաջորդող առաջին հնգամյակում (1929—1932 թթ.) այն, համադրելի գներով, հասավ 42 մլն. ռուբլու, այսինքն աճեց ավելի քան 5 անգամ։ Երկրորդ հնգամյակում կապիտալ ներդրումները, նախորդ հնգամյակի հետ համեմատած, ավելացան 2,6 անգամ, այսինքն աճի տեմպերը որոշ չափով նվազեցին, սակայն կապիտալ ներդրումների բացարձակ աճը կազմեց 70 մլն. ռուբլի, այսինքն 2 անգամ ավելի, քան այն աճը, որ կատարվել էր առաջին հնգամյակի տարիներին՝ 1921—1928 թթ. համեմատությամբ։

Նախապատերազմյան տարիներին կապիտալ ներդրումների աճը հասկանալի պատճառներով որոշ չափով դանդաղեց, իսկ Հայրենական պատերազմի տարիներին ներդրումների բացարձակ ծավալը նվազեց։ Սակայն հետպատերազմյան տարիներին նորից շարունակվեց կապիտալ ներդրումների աճը բարձր տեմպերով։ Չորրորդ հնգամյակում կապիտալ ներդրումները երկրորդ հնգամյակի համեմատությամբ աճեցին ավելի քան 2,1 անգամ։ Կապիտալ ներդրումները էլ ավելի աճեցին յոթնամյակի տարիներին. 1959—1965 թթ. դրանք կազմեցին 2.024 մլն. ռուբլի։ Նախնական տվյալներով 1966 թ. կապիտալ ներդրումների ծավալը (առանց կոլտնտեսությունների) կազմել է 437 մլն. ռուբլի։

Սովետական իշխանության 46 տարիների ընթացքում (1921—1966 թթ.) Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ (առանց կոլտնտեսությունների) ներդրված է 3.838 մլն. ռուբլի։ Կապիտալ ներդրումների տարեկան միջին աճի տեմպերը 1929—1965 թթ. ընթացքում կազմել են մոտ 14 տոկոս, իսկ

եթե չհաշվենք Հայրենական մեծ պատերազմի տարիները, 16 տոկոս։ Միայն յոթնամյակի տարիներին (1959—65 թթ.) կապիտալ ներդրումների տարեկան միջին աճի տեմպերը կազմել են ավելի քան 14 տոկոս, որը զգալիորեն ավելի է նույն ժամանակամիջոցում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսությունում կապիտալ ներդրումների տարեկան միջին աճի տեմպերից (8,6 տոկոս)։ Հետաքրքիր է նշել, որ նույն ժամանակամիջոցում զարգացած կապիտալիստական երկրներում այդ ցուցանիշը կազմել է. ԱՄՆ-ում՝ 3,3 տոկոս, Անգլիայում՝ 5,8 տոկոս, Ֆրանսիայում՝ 6,0 տոկոս։

Կապիտալ ներդրումների աճի բարձր տեմպերը հանգեցրել են ներդրումների բացարձակ մեծության այնպիսի աճի, որ միայն 1966 թ. ներդրումների ծավալը մոտ 25 տոկոսով ավելի էր, քան սովետական իշխանության առաջին 25 տարիների՝ 1921—1945 թթ. ընթացքում կատարված կապիտալ ներդրումները, իսկ 1961—1965 թթ. հնգամյակի ընթացքում կատարված կապիտալ ներդրումների ծավալը համարյա հավասարվում է Հայաստանում սովետական իշխանության նախորդ 40 տարիների՝ 1921—1960 թթ. ներդրումների ծավալին։ Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների աճի այդպիսի բարձր տեմպերը կպահպանվեն նաև ընթացիկ՝ 1966—1970 թթ. հնգամյակում։

Կապիտալ ներդրումների փոփոխման տեմպերի (յուրաքանչյուր տարվա ներդրումները՝ նախորդ տարվա համեմատությամբ տոկոսներով) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կապիտալ ներդրումների տարեկան աճը կատարվում է որոշ տատանումներով։ Այսպես, 1930 թ. կապիտալ ներդրումների աճը տոկոսներով նախորդ՝ 1929 թ. համեմատությամբ ամենամեծն է (225 տոկոս), որից հետո այն մեծ չափով իջնում է։ Թեև 1930—1966 թթ. ընթացքում միջին տեմպը կազմել է 111,4 տոկոս, բայց առանձին տարիների կապիտալ ներդրումների հարաբերությունը նախորդ տարիներին զգալի չափով տարբերվում է այդ միջինից։ Տատանման սահմաններն են 35—145 տոկոս (առանց 1930 թ.)։ Եթե հաշվի չառնենք 1942 թ., երբ ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման հետևանքով կապիտալ ներդրումների ծավալը խիստ կրճատվեց, ապա տարեկան ներդրումների փոփոխման նվազագույն սահմանը կկազմի 93 տոկոս (1937—1953 թթ.)։ Ներդրումների դինամիկայի նշված անհավասարաչափությունը Հայկական ՍՍՀ-ում որոշ առումով բացատրվում է նրանով, որ փոքր հանրապետությունում միաժամանակ կառուցվող օբյեկտների թիվը նույնպես մեծ չէ և առանձին խոշոր օբյեկտների կառուցման այս կամ այն ժամանակաշրջանում համապատասխան չափով փոփոխվում է նաև տարեկան ներդրումների դումարը ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ։ Վերջին տարիներին, սկսած 1960 թ., ներդրումների աճը ավելի հաստատուն է դարձել, տատանման սահմանները շատ փոքրացել են (տեմպը փոխվել է 108—116 տոկոսի սահմաններում), որը համեմատաբար ավելի բարձր մակարդակի պլանավորման արդյունք է։

Հետաքրքիր է տարեկան կապիտալ ներդրումների բաշխումը ըստ ֆինանսավորման աղբյուրների։ Կապիտալ ներդրումների հիմնական մասը ֆինանսավորվում է պետական պլանով նախատեսված միջոցների հաշվին (կենտրոնացված միջոցներ)։ Այդ միջոցների հաշվին են կատարվել բոլոր ներդրումները Հայաստանում սովետական իշխանության առաջին տարիներին՝ 1921—1928 թթ.։ Հաջորդ 25 տարիների (1929—1955 թթ.) ընթացքում կա-

պիտալ ներդրումները մասամբ կատարվում են նաև ապակենտրոնացված միջոցների հաշվին. պետական պլանով նախատեսված միջոցների հաշվին կատարվող ներդրումների ծավալը կազմում է բոլոր ներդրումների 90 տոկոսից ավելին։ Սկսած 1956 թ. այդ մասը ավելի է իջնում (մնալով միշտ 90 տոկոսից պակաս), ամենացածր մակարդակին հասնելով 1956—1958 և 1960 թթ. (79,1 տոկոս)։ 1962—1965 թթ. կենտրոնացված կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը աճում է և այնուհետև փոփոխվում փոքր սահմաններում։ Նախնական տվյալներով, նշված տեսակարար կշիռը 1966 թ. կազմել է 87,0 տոկոս։ Հետագայում այն, նկատի ունենալով պլանավորման և նյութական խթանման նոր սիստեմի անցնելու կապակցությամբ ձեռնարկության իրավունքների ընդլայնումը, ըստ երևույթին, էլ ավելի կնվազի։

Կապիտալ ներդրումների ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը, ինչպես և պետք էր սպասել, ցույց է տալիս, որ ներդրումների առավել մեծ մասը բաժին է ընկնում արդյունաբերությանը՝ ժողովրդական տնտեսության այդ կարևորագույն ճյուղին։ Միայն սովետական կարգերի առաջին տարիներին, տնտեսության վերականգնման պայմաններում, արդյունաբերությանը բաժին ընկնող միջոցները կազմել են 25 տոկոս, այսինքն այնքան, ինչքան հատկացված է եղել տրանսպորտի ու կապի զարգացմանը և բնակարանային շինարարությանը։ Առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում կապիտալ ներդրումների մեջ արդյունաբերության բաժինը կազմել է 36,6 տոկոս, որը Հայրենական պատերազմի տարիներին աճելով կազմեց ամբողջ կապիտալ ներդրումների կեսը։ Հետագա տարիներին այն իջնում է որոշ տատանումներով, 1965 թ. հասնելով իր ամենացածր սահմանին՝ 40,3 տոկոսի։ Յոթնամյակի տարիներին արդյունաբերության կապիտալ ներդրումները միջին հաշվով կազմել են բոլոր ներդրումների (առանց կոլտնտեսությունների) 41,3 տոկոսը, իսկ ամենամեծ տեսակարար կշիռը (42,9 տոկոս) ունեցել են 1962 թ. Չնայած 1962 թ. մինչև 1965 թ. արդյունաբերության կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը իջել է, բայց և այնպես ներդրումների բացարձակ ծավալը աճել է մոտ 50 մլն. ռուբլով, մի գումար, որը 1962 թ. արդյունաբերության մեջ կատարված բոլոր կապիտալ ներդրումների 40 տոկոսից ավելին է։

Հանրապետության շինարարական ինդուստրիայի զարգացման համար հատկացվող միջոցները չնչին մաս են կազմում ամբողջ կապիտալ ներդրումներում, սակայն, աստիճանաբար աճելով, 1961 թ. հասել են 4,7 տոկոսի։ Այդ նպատակով բաց թողնվող միջոցների աճի տեմպերը, մյուս ճյուղերի կապիտալ ներդրումների աճի հետ համեմատած, ամենաբարձրն են, սակայն բացարձակ ծավալով շինարարական ինդուստրիային բաժին են ընկել ամենից ավելի քիչ կապիտալ ներդրումներ, որով, ըստ երևույթին, պետք է բացատրել այդ ճյուղի զարգացման մակարդակի որոշ չափով ետ մնալը մյուս ճյուղերից։ 1962 թ., 1961 թ. համեմատությամբ, շինինդուստրիայի համար հատկացվող միջոցների տեսակարար կշիռը, ինչպես և դրանց բացարձակ ծավալը, 4,7 տոկոսից իջնում է մինչև 2,9 տոկոս, իսկ բացարձակ չափով՝ 11 մլն. ռուբլուց մինչև 8 մլն. ռուբլի, սակայն հաջորդ տարիներին նորից աճում է։ Այսպես, թեև 1965 թ. շինարարական ինդուստրիայում կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը ցածր էր (4,1 տոկոս), քան 1961 թ. (4,7 տոկոս), սակայն բացարձակ գումարով այն մեկ և կես անգամ (6 մլն. ռուբլով) ավելի էր 1961 թ. այդ ճյուղում ներդրված միջոցներից։ Հաշվի առնելով շինարարական

ինդուստրիայի առջև դրված հսկայական խնդիրները, կարելի է ենթադրել, որ հետագայում այդ ճյուղին հատկացվող միջոցները էլ ավելի կաճեն։

Հայաստանի գյուղատնտեսությանը հատկացվող միջոցների տեսակարար կշիռը սովետական իշխանության հաստատման օրից մինչև 1955 թ. խոշոր տատանումներ է տալիս. նա մաքսիմումի է հասել (12,5 տոկոս) հնգամյակի տարիներին, իսկ ամենացածր սահմանը (5,4 տոկոս) ունեցել է Հայրենական պատերազմի տարիներին։ 1956—1962 թթ. ընթացքում գյուղատնտեսությանը հատկացվող միջոցների տեսակարար կշիռը համեմատաբար անփոփոխ է մնում (8,8 մինչև 9,9 տոկոս), իսկ հաջորդ տարիներին, հատկապես 1963 թ. հետո, այն զգալի չափով ավելանում է, 1965 թ. հասնելով իր ամենաբարձր սահմանին՝ 13,3 տոկոսի։ Այդ տարիների ընթացքում պետության կողմից գյուղատնտեսությանը հատկացվող կապիտալ ներդրումների բացարձակ ծավալը աճեց ավելի քան 2 անգամ, 1962 թ. 27 մլն. ռուբլուց 1965 թ. հասնելով 55 մլն. ռուբլու։ Այդ ներդրումները էլ ավելի կավելացվեն նոր հնգամյակի տարիներին, գյուղատնտեսության զարգացման տեմպերը արագացնելու և ՍՄԿԿ ԿԿ մարտյան (1965 թ.) պլենումի և կուսակցության XXIII համագումարի առաջադրած խնդիրները կենսագործելու համար։

Տրանսպորտի և կապի զարգացմանը հատկացվող միջոցների տեսակարար կշիռը նույնպես զգալի տատանումների է ենթարկվել, տարբեր ժամանակամիջոցներում ցուցաբերելով նվազման կամ աճի տենդենց, սակայն յոթնամյակի տարիներին այն համեմատաբար կայուն էր, իսկ տարեկան ներդրումների ծավալը անշեղ աճել է, 1965 թ. կազմելով 25 մլն. ռուբլի՝ 1959 թ. 12 մլն. ռուբլու դիմաց։

Բնակարանային շինարարությանը հատկացվող միջոցների տեսակարար կշիռը նախապատերազմյան տարիներին մեծ փոփոխություններ չի կրել, միջին հաշվով կազմելով 18,1 տոկոս (1921—1965 թթ. միջինը նույնպես 18,1 տոկոս է), սակայն բացարձակ ծավալով այդ նպատակով հատկացվող միջոցները հսկայական չափով աճել են։ Այսպես, եթե նախապատերազմյան առաջին հնգամյակի (1946—1950 թթ.) ընթացքում բնակարանային շինարարությանը հատկացվել է 40 մլն. ռուբլի, ապա միայն 1965 թ. այդ նպատակին հատկացվող միջոցները արդեն կազմել են 73 մլն. ռուբլի, կամ 1916 թ. համեմատությամբ ավելացել են մոտ 13 անգամ։ Բնակարանային շինարարությանը հատկացվող ներդրումների այդպիսի աճը հնարավորություն տվեց զգալի չափով բարելավելու քաղաքային բնակչության բնակարանային պայմանները։

Առևտրական և կոմունալ ձեռնարկությունների, գիտության, մշակույթի, լուսավորության և առողջապահության հիմնարկների շինարարության համար հատկացվող կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը աճել է մինչև պատերազմական տարիները ներառյալ, որից հետո աստիճանաբար, որոշ տատանումներով նվազել է մինչև 1965 թ.։ Չնայած դրան, բացարձակ ծավալով այդ ներդրումները համարյա անընդհատ աճել են։ Ամենից ավելի մեծ չափով դրանք աճեցին 1965 թ., երբ դրանց տեսակարար կշիռը 15,6 տոկոսից բարձրացավ 18,5 տոկոսի, իսկ բացարձակ ծավալը՝ 56 մլն. ռուբլուց մինչև 77 մլն. ռուբլու, այսինքն մեկ տարում մոտ 40 տոկոսով։ Կուսակցությունը և կառավարությունը խնդիր են դրել հետագայում ավելի մեծ ուշադրություն դարձնել ժողովրդական տնտեսության այդ ճյուղերին, բնակչության կյանքի պայմաններն էլ ավելի բարելավելու նպատակով։

Արդյունաբերության բոլոր ճյուղերում էլ կապիտալ ներդրումները ժամանակի ընթացքում խիստ փոփոխման են ենթարկվում, ուստի և դժվար է նշել կապիտալ ներդրումների տեսանկյունից մեր արդյունաբերության համար ամենից ավելի կարևոր որևէ ճյուղ, եթե հաշվի չառնենք տնտեսության վերականգնման 1921—1928 թթ., երբ կապիտալ ներդրումների կեսից ավելին (52,2 տոկոս) հատկացված է եղել թեթև և տեքստիլ արդյունաբերությանը։ Առաջին և երկրորդ հնգամյակների ընթացքում ներդրումների առավել զգալի մասը (30,9 և 38,1 տոկոս) ուղղված էր հանրապետությունում էներգետիկայի զարգացմանը. կառուցվեցին Զորագեսը, Քանաքեռգեսը, սկիզբ դրվեց Սևանա լճից բաց թողնվող ելքերի մեծացման հետ կապված աշխատանքներին։ Զնայած երրորդ հնգամյակի տարիներին կապիտալ ներդրումները այդ ճյուղում նվազում են, բայց ետպատերազմյան տարիներին դրանք նորից զգալի չափով աճում են, 1956 թ. հասնելով 23,6 տոկոսի։ Սակայն այդ թվականից նորից սկսվում է էներգետիկական ճյուղերին հատկացվող կապիտալ ներդրումների ինչպես տեսակարար կշռի, այնպես և բացարձակ ծավալի կրճատումը մինչև 1960 թ., երբ ներդրումների ծավալը կազմեց 2,4 մլն. ռուբ. (1956 թ. 12,2 մլն. ռուբլու դիմաց), իսկ տեսակարար կշիռը նվազեց ավելի քան 9 անգամ։ Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ արդեն համարյա ավարտված էր Սևան-Հրազդան կասկադի բոլոր հիդրոկայանների շինարարությունը, հանրապետությունը պատրաստվում էր սկսել ջերմաէներգետիկայի զարգացումը՝ Երևանի, Հրազդանի, Կիրովականի ջերմաէլեկտրակենտրոնների կառուցումը։ Այդ օբյեկտների կառուցման աշխատանքների հետ մեկտեղ աճում են նաև կապիտալ ներդրումները, ուստի և 1960 թ. սկսած կապիտալ ներդրումները հանրապետության էներգետիկական ճյուղում անշեղորեն աճում են, 1965 թ. հասնելով 36,7 մլն. ռուբլու (տեսակարար կշիռը՝ 19,5 տոկոս)։

Համեմատաբար քիչ է փոփոխվում հանրապետության արդյունաբերության տրադիցիոն ճյուղերում՝ շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության մեջ կատարվող կապիտալ ներդրումների տեսակարար կշիռը, չնայած ներդրումների բացարձակ ծավալը, գումարային կապիտալ ներդրումների աճի հետևանքով, զգալի չափով աճում է։ Սակայն գունավոր մետալուրգիայում 1962 թ. 23,3 մլն. ռուբլուց ներդրումները աստիճանաբար նվազել են և 1965 թ. հասել 18,0 մլն. ռուբլու, որը մասամբ բացատրվում է այն բանով, որ լեռնաքիմիական արդյունաբերության նախագծային հզորությունները հիմնականում արդեն գործարկվել են մինչև 1962 թ.։

Կապիտալ ներդրումների անընդմեջ աճը մեքենաշինության բնագավառում (որոշ տատանումներով) մինչև 1964 թ. ցույց է տալիս հանրապետությունում արդյունաբերության այդ նոր ճյուղի ստեղծումը։ Զնայած քիմիական արդյունաբերությունը սկսել է զարգանալ դեռևս երկրորդ հնգամյակի տարիներին, սակայն այդ ճյուղի իրական զարգացումը փաստորեն տեղի ունեցավ յոթնամյակի տարիներին, սկսած 1959 թ., երբ քիմիայի զարգացմանը ուղղված կապիտալ ներդրումների ինչպես տեսակարար կշիռը, այնպես և բացարձակ ծավալը խիստ բարձրացան։ Բավական է նշել, որ 1957 թ. 2,8 մլն. ռուբլու փոխարեն 1962 թ. քիմիական արդյունաբերության մեջ հանրապետությունում ներդրվել է 28,4 մլն. ռուբլի կամ տասը անգամ ավելի։ Որոշ ճյուղերի բուռն զարգացումը, հասկանալի պատճառով, զուգորդվում է այլ ճյուղերի զարգացման տեմպերի դանդաղեցման հետ։ Դա կարող է պատճառ դառնալ ժողովրդական

տնտեսության որոշ ճյուղերի միջև համամասնությունների խախտման, ուստի և հանրապետության արդյունաբերության քիմիական ու մեքենաշինական ճյուղերում 1965 թ. կապիտալ ներդրումների ծավալի տեղի ունեցած որոշակի կրճատումը նպատակահարմար էր։

Տնտեսագիտական գրականության մեջ որպես կապիտալ ներդրումներ հասկացվում են հիմնական ֆոնդերի ստեղծման համար ծախսված միջոցները։ Սակայն վերջին ժամանակներս աստիճանաբար տարածում է ստանում այն առաջարկությունը, թե կապիտալ ներդրումների մեջ պետք է հաշվի առնվեն նաև շրջանառու միջոցների ստեղծման համար անհրաժեշտ կապիտալ ծախսերը։ Ձեռնարկության շահութաբերությունը հաշվում են՝ ելնելով բոլոր արտադրական ֆոնդերից։ Կապիտալ ներդրումների արդյունավետությունը հաշվարկելիս նկատի են առնվում ինչպես հիմնական ֆոնդերի, այնպես էլ շրջանառու միջոցների ստեղծման համար պահանջվող միանվագ ծախսերը։ Ուստի հանրապետությունում կապիտալ ծախսերի ամբողջ ծավալի մասին պատկերացում կազմելու համար, անկախ դրանց առանձին մասերի ֆինանսավորման աղբյուրներից, անհրաժեշտ է հիմնական ֆոնդերի ստեղծման համար ծախսված կապիտալ ներդրումներին ավելացնել նաև շրջանառու միջոցների աճը նույն տարիներին։ Ցավոք, շրջանառու միջոցների վերաբերյալ վիճակագրական տվյալները քիչ են և հիմնականում վերաբերում են յոթնամյակի տարիներին։

ՀՍՍՀ արդյունաբերության մեջ շրջանառու միջոցների տարեկան աճը կապիտալ ներդրումների տարեկան ծավալի հետ համեմատելի մեծություն է։ Չնայած որոշ, հաճախ և զգալի տատանումներին, միջին հաշվով դա տարեկան կապիտալ ներդրումների մեկ քառորդից ավելի է։ Այդ աճի բացարձակ չափը հանրապետության արդյունաբերությունում նույնպես զգալի մեծություն է կազմում՝ մի քանի տասնյակ մլն. ռուբլի, որը ժամանակի ընթացքում աճի տենդենց է ցուցաբերում։ Հասկանալի է, որ այդպիսի կապիտալ ծախսերը չի կարելի հաշվի չառնել ժողովրդական տնտեսության զարգացմանը ուղղված կապիտալ ներդրումների կազմում։ Առավել ևս չի կարելի դրանք հաշվի չառնել կապիտալ ներդրումների արդյունավետությունը գնահատելիս, մասնավորապես ճյուղի կամ առանձին ձեռնարկության զարգացման օպտիմալ տարբերակը ընտրելիս։

Կապիտալ ներդրումների բացարձակ ծավալից բացի մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեկ շնչին բաժին ընկնող կապիտալ ներդրումների ծավալը, որը Հայաստանի ժողովրդական տնտեսությունում (պետական և կոոպերատիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների, կոլտնտեսությունների և բնակչության ներդրումները) մոտավորապես համընկնում են ՍՍՀՄ միջին մակարդակին։ Այսպես, 1950 թ. այն մի քիչ բարձր էր նշված միջին մակարդակից, սակայն հաջորդ տարիներին իջել է միջինից ցածր մակարդակի մինչև 1965 թ., երբ նորից փոքր չափով գերազանցել է այդ միջինից։ Յոթնամյակի տարիներին, Հայաստանի ժողովրդական տնտեսությունում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող բոլոր կապիտալ ներդրումները միջին հաշվով կազմել են 175 ռուբլի, որը 10 ռուբլով ցածր է Միության միջին մակարդակից (185 ռուբ.), կամ կազմում է դրա մոտ 95 տոկոսը։ Բայց այդ ցուցանիշի աճի տեմպերը յոթնամյակի ընթացքում Հայաստանում ավելի բարձր են եղել, քան Միությանը՝ ամբողջությամբ վերցրած։ Այդ է պատճառը,

որ յոթնամյակի վերջին տարում այդ ցուցանիշը ավելի բարձր էր, քան Միության միջինը։

Մեծ ծավալի կապիտալ ներդրումները և դրանց աճի բարձր տեմպերը ապահովեցին Հայաստանի ժողովրդական տնտեսության բուռն զարգացում. Երբեմնի հետամնաց երկրամասը դարձավ արդյունաբերական հզոր զարգացած հանրապետություն, համատարած էլեկտրիֆիկացման երկիր։ Տարեց-տարի կառուցվում և շարք են մտնում նոր խոշոր ձեռնարկություններ։ Եթե չորրորդ և հինգերորդ հնգամյակներից յուրաքանչյուրում գործարկվել է 41 խոշոր պետական արդյունաբերական ձեռնարկություն, ապա 1961—1965 թթ.՝ 61։

Անընդհատ ավելանում է հանրապետությունում գործարկվող հիմնական ֆոնդերի գումարը։ Յոթնամյակի վերջին տարում գործարկման ֆոնդերի գումարը, համեմատած 1958 թ. հետ, մոտ 2,5 անգամ ավելի է եղել. հասկանալի է, որ համեմատական չափով ավելի են եղել նաև այդ թվականին գործարկված արտադրական հզորությունները։ Յոթնամյակի ընթացքում հիմնական ֆոնդերի գործարկման աճի տեմպերը, չնայած գործարկման պլանների զգալի թերակատարմանը, կազմել են 13,5 տոկոս։ Այդպիսի աճի արդյունք է մի քանի տասնյակ նոր խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների, հարյուրավոր միջին ձեռնարկությունների և խոշոր արտադրամասերի, մեծ թվով վերակառուցված, ընդլայնված և տեխնիկական նոր միջոցներով հագեցված ձեռնարկությունների գործարկումը յոթնամյակի տարիներին։

Միայն յոթնամյակի տարիներին կառուցվել և շարք են մտել արդյունաբերական այնպիսի նոր խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Երևանի «Հիդրոհաղորդակ», Կիրովականի ճշգրիտ հաստոցների, Զարենցավանի ներտաշ հաստոցների, Լենինականի «Շինմեքենա», Երևանի քիմիական ռեակտիվների գործարանները, Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը և այլն։

Լայն թափ է ստացել բնակարանային շինարարությունը։ Սովետական իշխանության տարիներին՝ 1921—1965 թթ., պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից շահագործման են հանձնվել 6.847 հազար քառ. մ. օգտակար մակերեսով բնակելի տներ, ըստ որում, միայն յոթնամյակի տարիներին (1959—1965 թթ.) կառուցվել է 35 տոկոսով ավելի շատ բնակելի տարածություն, քան նախորդ 38 տարիներին։ Նույն տարիներին լայն ծավալ է ստացել նաև անհատական բնակարանային շինարարությունը։ Եթե 1946—1965 թթ. բնակչության կողմից իր հաշվին և պետական վարկի օգնությամբ քաղաքներում ու բանավաններում կառուցված են 1.445 քառ. մետր ընդհանուր մակերեսով բնակելի շենքեր, իսկ գյուղական վայրերում՝ 116,8 հազ. բնակելի տուն, ապա դրանց մոտ կեսը կառուցվել է յոթնամյակի տարիներին, որը նույնպես ապացույց է բնակչության բարեկեցության բարձրացման և եկամուտների զգալի ավելացման։

Կապիտալ ներդրումների մեծ ծավալը անարտադրողական ոլորտում հնարավորություն տվեց աննախադեպ թափի շինարարություն ծավալել նաև կրթության, առողջապահության և մշակույթի բնագավառներում։ Սովետական իշխանության տարիներին Հայաստանում կառուցվել և շարք է մտել 1.281 դպրոց՝ 338,5 հազար աշակերտական տեղով, որից յոթնամյակի ընթացքում կառուցված 198 դպրոցների թվում է նաև 26 դպրոց-ինտերնատ՝ 8.750 աշակերտական տեղով։ Պետք է նշել, որ յոթնամյակի ընթացքում կառուցված դրպրոցները իրենց տարողությամբ զգալիորեն գերազանցում են նախկինում կա-

ռուցված դպրոցներին։ Այսպես, դրանք միջին հաշվով ունեն 540 աշակերտական տեղ, մինչդեռ, օրինակ. 1956—1858 թթ. կառուցված դպրոցները նախատեսված էին յուրաքանչյուրը միջին հաշվով 320 աշակերտական տեղի համար։ Չնայած շահագործման հանձնված դպրոցների մեծ թվին, աշակերտական տեղերով ապահովվածության աստիճանը Հայաստանում դեռևս ցածր է, աշակերտական հասակ ունեցող երեխաների աճը գերազանցում է շահագործման հանձնվող նոր աշակերտական տեղերի թվին, որն էլ ավելի է սրում դպրոցների քանակի անբավարարությունը։ Նույն ձևով, չնայած շարք մտնող կուլտուրական և առողջապահական հիմնարկների մեծ թվին, առայժմ այդպիսի հիմնարկների պահանջը լրիվ ապահովված չէ։ Սովետական իշխանության տարիներին շարք են մտել 7.522 մահճակալով հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ, ընդ որում, այդ թվի ավելի քան 45 տոկոսը շահագործման է հանձնվել յոթնամյակի ընթացքում։ Շարք մտած մանկապարտեզների և մանկամսուրների 27.895 տեղերի համարյա 63 տոկոսը (17.500 տեղ) հանձնվել է շահագործման նույնպես յոթնամյակի տարիներին։ Կուսակցության և կառավարության հոգատարության շնորհիվ այդ նպատակին ուղղված կապիտալ ներդրումների ծավալի հետագա մեծացում է նախատեսվում, որի հաշվին էլ ավելի ինտենսիվ կաճի շահագործման հանձնվող առողջապահական և կուլտուրական հիմնարկների թիվը։

Խոշոր միջոցներ են հատկացնում առողջապահական, կուլտուրական և կրթական հիմնարկների կառուցման նաև կոլտնտեսությունները։ Այսպես, ալեստական միջոցներով կառուցված շինարարությունից բացի կոլտնտեսությունների կողմից յոթնամյակի ընթացքում գյուղում կառուցվել են 83 դպրոց՝ 19,1 հազար աշակերտական տեղով, 375 մահճակալով հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ, 4.304 տեղով մանկապարտեզներ և մանկամսուրներ։

Այս ամենը պահանջում է մեծ ծավալի շինմոնտաժային աշխատանքների իրականացում։ Եթե 1921—1928 թթ. ժամանակամիջոցում շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմում էր 6,7 մլն. ռուբլի, առաջին հնգամյակում (1929—1932 թթ.)՝ 34,8 մլն. ռուբլի, ապա միայն 1965 թ. շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմեց 260 մլն. ռուբլի։ Շինարարական աշխատանքների այդպիսի մեծ ծավալը իր հերթին անհրաժեշտ դարձրեց բարձր որակավորում ունեցող մասնագետներով ապահովված և բարձր արտադրողական շինարարական մեքենաներով ու մեխանիզմներով հագեցված հզոր շինարարական ինդուստրիայի ստեղծումը։ Ներկա ժամանակամիջոցում շինարարության մեջ զբաղված են 79.106 մարդ, որ գրեթե 2 անգամ ավելի է Հանրապետության 1928 թ. բանվոր-ծառայողների թվաքանակից։

Յոթնամյակի վերջում շինարարության մեջ ինժեներա-տեխնիկական աշխատողների թվաքանակը հասավ 5.772 մարդու և կազմեց աշխատողների թվաքանակի 7,2 տոկոսը։

Մեծ չափով ավելացավ շինարարական կազմակերպությունների մեքենայացվածությունը։ Աճեց մեքենայացված եղանակով կատարվող աշխատանքների բաժինը և իջավ ձեռքի աշխատանքի բաժինը։ Եթե 1952 թ. Հանրապետությունում կային 130 միավոր շինարարական մեքենաներ ու մեխանիզմներ, որից 1 վերամբարձ կռունկ և 83 էքսկավատոր, ապա յոթնամյակի վերջում շինարարական մեքենաների և մեխանիզմների պարկն ընդլայնվեց 14,5 անգամ։

Շինարարական ինդուստրիան բուռն զարգացում ապրեց յոթնամյակի տարիներին (1959—1965 թթ.), որի ընթացքում ժողովրդական տնտեսության այս ճյուղում տեղի ունեցան որակական մեծ փոփոխություններ։ Այս ժամանակամիջոցում 1 մլն. ռուբլու շինմոնտաժային աշխատանքներին ընկնող երկաթբետոնե և բետոնե կոնստրուկցիաների ու դետալների քանակն ավելացավ ավելի քան 3 անգամ՝ հասնելով 1958 թ. 1,31 հազար խոր. մետրից մինչև 4,08 հազար խորանարդ մետրի 1965 թ.։ Շինարարական մեքենաների և մեխանիզմների պարկն աճեց մոտ 2,5 անգամ։

Բարձրացավ ծանր և աշխատատար պրոցեսների մեքենայացման մակարդակը։ 1965 թ. մեքենայական եղանակով կատարված աշխատանքների տոկոսային հարաբերությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահության շինարարական կազմակերպություններում հողային աշխատանքների գծով կազմեց 90 տոկոս, բեռնման-բեռնաթափման աշխատանքների գծով՝ 86 տոկոս, բետոնե և երկաթ-բետոնե կոնստրուկցիաների մոնտաժման գծով՝ 97 տոկոս, ներկման աշխատանքների գծով՝ 46 տոկոս և այլն։

Ավելի ու ավելի մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում մասնագիտացված կազմակերպությունների կողմից, որոնց քանակը 1966 թ. կազմեց հանրապետության շինարարական և մոնտաժային կազմակերպությունների ընդհանուր թվի մոտ կեսը։ Ինդուստրիալ մեթոդների ներդրումը, հավաքովի կոնստրուկցիաների և դետալների կիրառումը, աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը, մասնագիտացումը և այլն հնարավորություն տվեցին յոթնամյակի ընթացքում հիմնականում վերացնել շինարարության սեզոնայնությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 44,5 տոկոսով, ավելացնել կատարվող աշխատանքների ծավալը 2 անգամ՝ աշխատողների թվաքանակի 145 տոկոսի աճի պայմաններում։

Հայտնի է, որ ձեռնարկությունների և կազմակերպությունների համակենտրոնացումն ու խոշորացումը հանդիսանում են ինքնարժեքի իջեցման կարևորագույն գործոն։ Շինարարական կազմակերպությունների խոշորացումը նույնպես մեծ հնարավորություններ է ընձեռում ժամանակակից բարձր արտադրողական մեքենաների ու մեխանիզմների ներդրման, աշխատանքային ու նյութական ռեսուրսների նպատակահարմար օգտագործման համար։ Այս ուղղությամբ հանրապետությունում մեծ աշխատանք է կատարվել, սակայն պետք է նշել, որ սկզբնական շինարարական կազմակերպությունների թվի աճի տեմպը մեզ մոտ դեռ զգալիորեն գերազանցում է միութենական միջին տեմպից։ Սկզբնական կապալառու շինարարական և մոնտաժային կազմակերպությունների քանակը յոթնամյակի ընթացքում Միության մեջ կրճատվել է 2,9 տոկոսով, կապալառուական եղանակով շինմոնտաժային աշխատանքների ծավալի 61,6 տոկոսի աճի դեպքում։ Այդ նույն ժամանակամիջոցում հանրապետությունում սկզբնական կապալառու շինմոնտաժային կազմակերպությունների քանակը ավելացել է 95 տոկոսով, կատարված աշխատանքների ծավալի ավելի քան 2 անգամ աճի պայմաններում։ 1966 թ. պլանով սկզբնական շինարարական կազմակերպությունները, ըստ նրանց տարեկան աշխատանքի ծավալի, բաշխվում էին հետևյալ կերպ. բոլոր սկզբնական կապալառու կազմակերպությունների 50 տոկոսի տարեկան բեռնվածությունը 2 մլն. ռուբլուց ցածր էր, դրանից բարձր ծրագիր ուներ միայն 28 տոկոսը, 0,5—1,0 մլն. ռուբլու ծրագիր ունեցող կազմակերպությունների քանակը կազմում էր 18 տոկոս։

Միության մեջ 2 մլն. ռուբլուց ավելի տարեկան ծրագիր ունեցող սկզբնական շինկազմակերպությունների տեսակարար կշիռը 39 տոկոս էր և միայն երկու հանրապետությունում (Վրացական ՍՍՀ և Մոլդավական ՍՍՀ) այդ տոկոսը ավելի ցածր էր (26 տոկոս), քան Հայաստանում։ Հետագա խոշորացումը հնարավորություն կտա ավելի բարելավելու շինարարական կազմակերպությունների կարողությունների օգտագործումը, բարձրացնելու շինարարական աշխատանքների որակը և իջեցնելու դրանց ինքնարժեքը։

Այսպիսով, սովետական իշխանության հաստատումը հնարավորություն տվեց ՀՍՍՀ ժողովրդական տնտեսությունում կատարել մեծ ծավալի կապիտալ ներդրումներ, ապահովելով դրանց անընդմեջ աճը, ըստ որում, ներդրումների աճի տեմպերը շատ ավելի են նույն տարիներին ամենից ավելի զարգացած կապիտալիստական երկրներում եղած տեմպերից։ Շնորհիվ այդպիսի կապիտալ ներդրումների Հայաստանը դարձավ ինդուստրիալ բարձր զարգացած մի հանրապետություն, որի արտադրանքը առաքվում է աշխարհի շուրջ 70 երկրներ։ Ընթացիկ հնգամյա պլանով նախատեսված է էլ ավելի մեծացնել կապիտալ ներդրումների ծավալը և հանրապետության արդյունաբերության արտադրանքը 1966—1970 թթ. ընթացքում ավելացնել մոտ 80 տոկոսով։ Միության արդյունաբերական արտադրանքի աճը նույն տարիներին պետք է կազմի 47—50 տոկոս։